

Սերիալների մասին

Բաց նամակ մշակույթի նախարարությանը

Ինձ շատ է անհանգստացնում նոր սերնդի հոգեկան և ֆիզիկական ձևավորումը, որին բոլորովին չեն նպաստում հեռուստատեսային հաղորդումներն ու սերիալները: Այս հոդվածով ուզում եմ արտահայտել իմ կարծիքը, հուսալով ինչ-որ չափով օգտակար լինել այդ հարցում: Յուրով եմ, այն կտպագրվի «Առավոտում»:

Բրազիլական սերիալների առանցքը անբարոյական կամ կիսաբարոյական սերն է, մեր սերիալներում հանցագործ աշխարհը: Ըստ երևույթին, այդ թեմաներն են արդիական յուրաքանչյուր հասարակության համար: Բրազիլական սերիալների վերջում բոլորը դառնում են ազգականներ: Իսկ մեր մոտ, երևի, հանցագործներ: Հակառակ դեպքում, ինչպե՞ս հասկանալ, որ Որսորդմիության նախագահին սպանելուց հետո վերջերս տեղի ունեցած սպանությունը ՀՀ գլխավոր դատախազը բնութագրեց որպես վրիժառություն: Իհարկե, եթե իրավապահ օրգանները իրենց բարձրության վրա չեն, ապա հանրապետությունում կգարգանա վեճեր: Հետևաբար «Վրիժառուն» դաժան ֆիլմը խիստ ակտուալ է: Գոռն արդարության հասնելու համար բոլոր քաղաքացիներին առաջարկում է զբաղվել կառատեով: Ըստ երևույթին, նա ուրիշ ելք չի տեսնում:

Նախկինում մեզ ֆիլմերում գրավում էին դրական գլխավոր հերոսները և մենք աշխատում էինք մանավել նրանց: Ներկայիս սերիալներում գլխավոր հերոսները հանցագործներն են և, հակառակի պես, այնքան լավ են խաղում, որ մանկության շրջանում դրանք դիտելի հաստատ հանցագործ կդառնային: Հիացած եմ Միսակի /«Վրիժառուն»/, Արտաշես Ռուբինյանի, Սրապի /«Կյանքի գինը»/, հանցագործ աշխարհի գույնզգույն հեղինակությունների /«Որոգայթ», «Դժբախտ երջանկություն»/ կերպարներով: Ափսոս որ համարժեք դրական կերպարներ չկան: Միակ դրական կերպարը Հայկն է /"Դ.Ե."/, սակայն նա էլ որպես ոստիկան հիմար է: Պատկերացնելու՞ բան է, կապիտանի կոչումով սպան հեռախոսով լսում և կատարում է հանցագործի հրամանները՝ վազում է, տաքսի է նստում, փողերով ճամպուկը ձորն է նետում իսկ հետո պարզվում է, որ փողը ուրիշ մարդ է վերցրել: Կամ, իմանալով որ վտանգավոր հանցագործը հաճախ է երևում այդ ռեստորանում, ծպտված ոստիկան-մատուցողներ նշանակելու փոխարեն մատուցողին խնդրում է որ հանցագործի գալուն պես իրեն տեղյակ պահի: Կամ թմրանյութերի բաժնի պես կապիտան Ռուբոյի պրիմիտիվ գործողությունները: Այսպիսի անտրամաբանական, ոչ մասնագիտական դրվագները ֆիլմում անթիվ են: Լավ չե՞ր լինի ընդհանրապես ոստիկանությանը հանել ֆիլմից, դաշտը թողնելով հանցագործ աշխարհին, ինչպես մյուս ֆիլմերում, որի որոշումները ծայրահեղ խիստ են, միակողմանի, բայց արդար: Ջարմանալի է, որ մեր ոստիկանության վերնախավը այս սերիալները չի նայում, հակառակ դեպքում իր բողոքը կարտահայտեր: Կամ գուցե ճիշտ է ընկալել ֆիլմի սցենարիստը մեր ոստիկանության գործունեությունը: Եթե վերնագրվեր «Ինչպես չպետք է գործեն ոստիկանները», այդ ֆիլմը կմրցակցեր «Օսկարի» համար: Սրանք դեռ համեմատաբար լավ ֆիլմերն են:

Երևի կարելի է համաձայնվել Հենրիկ Հովհաննիսյանի հետ, որ հասարակությունը զգում է այս տիպի ֆիլմերի պահանջը: Ես ևս էկրանի առջև հանգստանում եմ դիտելով դրանք: Բայց դրանց ուղղորդվածությունը, բարոյականությունը, տրամաբանությունն ու անհրաժեշտությունը պետք է լինեն խիստ հսկողության տակ: Հակառակ դեպքում ես համաձայն եմ Ռուբեն Գևորգյանցի հետ, ով այս ֆիլմերն անվանեց դիվերսիա ժողովրդի դեմ (չնայած ինքը Գոռի ֆիլմի գլխավոր գողն է): Միթե այդքան անհույս է մեր հասարակության վիճակը, որ ոչ ոք չի ընդվզում այդ հաղորդումների ու սերիալների դեմ: Իշխանության վերնախավի կողմից բացասական կարծիք պետք է հայտնելին ինտելեկտուալները և առաջին արձագանքը պետական մակարդակով լսեցի Արմեն Աշոտյանի կողմից, սակայն առանց որևէ արդյունքի: Հեռուստատեսությունը օժտված է դաստիարակչական, ճաշակի զարգացման մեծ ուժով: Երևի անհրաժեշտ է անցյալի նման ստեղծել հանձնաժողովներ նոր ֆիլմերը և հաղորդումները թույլատրելու համար: Ներկայումս նման պրոցես գնում է բնական ճանապարհով: Սրցակցության միջոցով հեռուստադիտողն է որոշում թե որ հաղորդումը դիտի, սակայն հանձնաժողովի օգնությամբ կարելի կլինի անտեղի (մեղմ ասված) ծախսերը ուղղորդել առավել կարևոր բնագավառ, օրինակ բարեգործական:

“Շաբաթ երեկոյան” հաղորդումների ժամանակ հանդիսատեսի հրճվանքը, ծափերը ինձ զարմացնում են: Մի՞թե դա մեր մակարդակն է: Ես ցնցված եմ տաքսի վարորդներին /չսափրված, գլխարկով/ և զրքանչներին վերաբերող հաղորդումներից և այն էլ առաջին ակիքով: Ասածը վերաբերում է ոչ միայն այս հաղորդմանը:

Ով մեկ անգամ երևում է էկրանին, իրեն աստղ է համարում և մասնակցում է «աստղային» հաղորդումներին: Նրանցից մեկը խոստովանեց, որ «պոչը խուզել խառնվել է ջահելներին», համաձայն եմ, որ իրեն լավ է զգում ջահելների հետ և կարծես ջահելացել է, համաձայն եմ, որ մեծ հաճույք է ստանում այդ հաղորդմանը մասնակցելիս, համաձայն եմ, սակայն մեր ո՞ր մեղքի համար դա պիտի նայենք: Կարող եք ասել. դուր չի գալիս՝ փոխեք ալիքը, սակայն բոլոր ալիքներում նույնատիպ հաղորդումներ են: Համարյա բոլոր ալիքներից լսվում են մեր ինքնակոչ «աստղերի» կլկլոցը, որոնք միայն շարժ ու ձևով իրենց արդեն կայացած աստղեր են համարում: Իրար մասին խոսում են բացառապես գերադրական աստիճանով, որով պատվազրկվում են երկու կողմերն էլ: Բնական է խոսքը բոլորի մասին չէ: Վերջին հաշվով արեք ինչ ուզում եք, սակայն ձեր նեղ շրջանակում և մեզ մասնակից միք անի այդ ալերգածին հաղորդումներին:

Ի՞նչ է մտածում մեր մշակույթի նախարարությունը: Մի՞թե դրան չի հետաքրքրում հայ մշակույթում տիրող այս «վերվարածությունը»: Այս բնագավառի աշխատողները բավարարվա՞ծ են արդյոք հաղորդումների որակով:

Նախարարությունը պետք է իրավունք նվաճի տուգանելու հեռուստաալիքները էկրանի առջև չսափրված կամ ծխող մարդկանց ցուցադրելու դեպքում, առավել ևս, որ արդեն գոյություն ունի ծխելու դեմ համապատասխան օրենքը: Ինչու՞ Վիգեն Ստեփանյանը ռայկոմի քարտուղարի դերերում հանդես էր գալիս կոկիկ, սափրված, իսկ այժմ իրեն թույլ է տալիս էկրանին և շրուններում երևալ ուրիշ տեսքով: Դա անհարգալից վերաբերմունք է նույնիսկ ներկայիս հեշտ զվարճացող հանդիսականի նկատմամբ:

Ներկայիս վիճակագրական տվյալներով աշխարհում ինֆարկտից ամենացածր մահացությունը ԱՄՆ-ում է և դրա երկու հիմնական պատճառներից մեկը պետական մակարդակով ծխելու դեմ պայքարն է: Եթե հաղորդումներում կամ ֆիլմերում դրական հերոսը շոգեքարչի նման ծուխ է արձակում, ապա մանուկների համար դրանց ընդօրինակելու առաջին և ամենահեշտ (իսկ հետագայում նաև հաճելի) ձևը ծխելն է:

Այս բոլորի մասին պետք է ոչ միայն մտածել:

Հեռուստադիտողների արձագանքը այս հոդվածին թույլ կտա դատողություններ անել հասարակության ներկայիս մակարդակի մասին և հասկանալ թե իմաստ ունի՞, կամ գուցե այլևս իմաստ չունի՞ այսքան անհանգստանալ:

Հարգանքով՝ դոցենտ Ռ. Հակոբյան

21. XI. 08.